ԴՎԻՆԻ 1978—1979 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

1978—1979 թթ. Դվինի պեղումները շարունակվեցին միջնաբերդի ստորին հատվածում, հարավային բուրգի շրջանում և քաղաքի կենտրոնական թաղամասում։

Միջնաբերդի արևմտյան լանջում, որը պայմանականորեն ստորին բերդ է անվանվում, աշխատանքներ կատարվեցին արհեստավորական թաղամասում։ Այստեղ, մոտ 300 քառ. մ տարածքում, բացվեցին փողոցի հատված և նոր շինություններ։ Փողոցի հյուսիսային մասն ունի լավ պնդացրած կավե հատակ, որի մեջ նկատվում են կավանոթների բեկորներ և երկաթի մնացորդներ։ Ըստ երևույթին, նրա երկու կողմերում տեղավորված արհեստանոցների և արհեստավորների տների աղբը, տարբեր իրերի մնացորդներով, թափվել է փողոց, իսկ հետագայում ամրացվել է կավե զանգվածով։ Նախորդ տարիների պեղումների ժամանակ այս հատվածում բացվել էր թվով երրորդ շինությունը, որի գործառական նշանակությունը չհաջողվեց պարզել՝ նյութերի սակավության պատճառով։ Այս շինությունն ունեցել է նեղ միջանցք, հյուսիսային կողմում՝ թոնիրներով սենյակներ։ Վերջիններիս անմիջապես կից բացվեց հաջորդ՝ չորրորդ շինությունը, որը, ինչպես և նախորդները, գտնվում է փողոցի աջ մասում։ Այն ունի մեծ գետաքարերով շարված 0,8 մ լայնությամբ պատեր (բացվել է 8 մ երկարությամբ, 0,7 մ բարձրությամբ), մի քանի անգամ վերանորոգված հատակ, որի հետևանքով հստակ նկատվում են շենքի ներսում կատարված փոփոխությունները։ Պեղումների ընթացքում բացվել են նաև մի մեծ սենյակ և մյուս սենյակների պատերի հատվածները։ b—24 քառակուսում նկատվում է հում աղյուսե պատի փուլ եկած մի մեծ շերտ։ Դվին քաղաքի այս հատվածից գտնված նյութերը շատ բազմազան են, ինքնատիպ և բնորոշ իր ժամանակի համար։ Շերտագրական դիտարկումները և գտնված դրամները (6 հատ) թույլ են տալիս պեղավայրը թվագրել XII դ. երկրորդ կեսով, XIII դ. առաջին երեք տասնամյակներով։ Տեղի շնարակված խեցեղենն աչքի է ընկնում միագույն և բազմագույն օրինակներով։ Շատ է տարածված միագույն կանաչ շնարակը։ Կան ամբողջական թասեր (աղ. I, 1), բեկորներ, կենդանակերպ (առյուծագլուխ) կանթեր։ Հասարակ խոհանոցային խեցեղենը ներկայացված է կարմիր փայլեցված սափորներով (աղ. I, 2), քրեղաններով, տարբեր չափերի կճուճներով, որոնցից հետաքրքրական է քառականթ, փորագիր զարդերով, ցածրադիր մրապատ անոթը։ Կան նաև դրոշմազարդ կարասների բեկորներ։ Այս բազմաձև խեցեղենի ուսումնասիրությունը կարևոր է Դվինի և առհասարակ Հայաստանի ժամանակակերտ խեցեղենի թվագրությունը, տեսակների դասակարգման և անոթների կիրառական նշանակությունը պարզելու առումով։

Բավական շատ են ստորին բերդի արհեստավորական թաղամասից հայտնաբերված մետաղե իրերը։ Գտնվել են լավ պահպանված երկաթե մի մկրատ

(աղ. II, 1), որն իր ձևով գրեթե չի տարբերվում ժամանակակից նման գործիքներից, քառակուսի բերանով, կլոր անցք ունեցող կոթառով փայտատ (աղ. II, 2), սրածայր գործիքների բեկորներ, զարդեղեն և դարբնոցային խարամի մնացորդներ։ Արհեստավորական թաղամասի պեղումները կարևոր են



Աղյուսակ 1

քաղաքի սոցիալական պատկերը պարզելու առումով։ Այստեղից հայտնի են նաև մ. թ. ա. VIII—VII դդ. թվագրվող օբսիդիանե փոքրիկ նետասլաք և փորագիր զարդերով սև խեցեղենի բեկորներ, որոնք գտնվել են պատահաբար և վերին շերտերում են հայտնվել միջին դարերում հորեր փորելու հետևանքով։

Դվինի զարգացած միջնադարի (XI—XIII դդ.) մշակույթի հստակ շերտագրության համար անգնահատելի նյութեր են տվել հարավային բուրգի պեղումները։ Այստեղ բացվել են նախորդ տարվա շինությունների օրգանական մասը կազմող՝ նեղ միջանցքով երկու փոքր սենյակ, որոնց մեջ կան փոքրիկ թոնիրներ և օջախներ։ Արևելյան մասում 1979 թ. բացվել է հում աղյուսե, անմշակ քարերով և թրծած աղյուսե, հողե հատակներով ամենա-



Աղյուսակ II

վերին շերտի շինությունների մի խճողված պատկեր։ Հավանաբար, այս շինությունները վերականգնվել կամ կառուցվել են 1226 թ. Ջալալ էդ-Դինի արշավանքներից անմիջապես հետո, երբ Դվինը խիստ ավերվել էր[1]։

---

1 Հակոբ Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 199։

Հարավային բուրգի շրջանում գտնված նյութերը, մասնավորապես ջնարակված խեցեղենը, որի զուգահեռները հանդիպում են Անիի և վրացական խեցեգործական կենտրոնների համապատասխան նյութերում, թվագրվում են XII դ. վերջով և XIII դ. առաջին կեսով։

Բուրգին կից շինություններից ի հայտ եկան կավի մեծ զանգվածներ։ Ենթադրվում է, որ դրանք փուլ եկած բուրգի մնացորդներ են, որոնց տակ թաղվել են կացարաններ։ Հայտնաբերվեցին նաև մեծ քանակությամբ ձիու կմախքներ։ Նշված հատվածի երկրորդ հորիզոնում՝ 2,5 մ խորության վրա, 1979 թ. բացվեց գիպսե սվաղով պատի մի անկյուն։ Մեծացնելով պեղավայրը, հաջողվեց մաքրել այդ պատի երեսը՝ 26 մ երկարությամբ և տեղ-տեղ 4 մ խորությամբ։ Տեղանքի մանրազնին քննությունը ցույց տվեց, որ այդտեղ եղել է հատակագծային լուծմամբ եզակի մի շինություն, որը, ըստ երևույթին, կառուցվել է X—XI դդ., անմիջապես պարսպի հարևանությամբ։ Կառույցի արտաքին պատը շարունակվում է երկարությամբ և խորությամբ. պատը բացելիս, նրա արևմտյան հատվածում, կտրվեց բուրգի մի անկյունը և պարսպապատի մի հատվածը։ Ըստ երևույթին, շինությունն ավերվելուց հետո միջնաբերդի պարիսպը վերանորոգվել է և լայնությամբ իր տակ թողել պալատի հարավային մասերը։ Անհավանական չէ, որ միջնաբերդի ավելի հին պարիսպը կարող էր քիչ դուրս եկած լինել։ Դեռ 1962 թ., երբ պեղվում էր պարսպի և բուրգի արտաքին հատվածը, հողային աշխատանքների մեծ ծավալը թույլ չտվեց պարզել պարսպի վերանորոգման փուլերը։ Արշավախմբի խնդիրն է մոտ ապագայում աշխատանքներ կատարել քաղաքի և միջնաբերդի պաշտպանական համակարգի հարցերը վերհանելու ուղղությամբ։

Պեղվող բնակավայրի շերտագրական պատկերը հաստատվում է տեղում գտնված ստույգ թվագրվող դրամներով[2] և նյութերով։ Ջնարակած խեցեղենն աչքի է ընկնում պատրաստման բազմազանությամբ, գունային բազմերանգությամբ, զարդերի և ձևերի առատությամբ։ Ամենավերին հորիզոններից դուրս եկած խեցեղենի մեջ ուշագրավ են անգրված անոթները, որոնց զարդերը պատված են կանաչ և շագանակագույն ջնարակով։ Նմանօրինակ խեցեղենը, որ XIII—XIV դդ. լայն տարածում ուներ Անդրկովկասում[3], աչքի է ընկնում պատկերի հստակությամբ և գունային զսպվածությամբ։ Այս շրջանին բնորոշ է նաև միագույն, կանաչ խեցեղենը՝ հատկապես թասերը և աղամանները։ Անոթները չունեն որոշակի համաչափություն և ձևերի ու կավի որակի առումով պատրաստված են ավելի անփույթ։ Բոլոր դեպքերում, նախորդ շրջանի խեցեղենի համեմատությամբ, նկատվում է արտադրության անկումային միտում։

XII—XIII դդ. շերտերում գտնված ջնարակված խեցեղենի վրա ուժեղ է մասսայական արտադրության կնիքը։ Շատ են ներքուստ, երեք կողմից եռանկյունաձև, փորագիր զարդերով թասերը (ամբողջական և բեկորներով), որոնք բնորոշ են եղել Դվինի արտադրությանը։ 1968 թ. քաղաքային թաղամասերից մեկում բացված արհեստանոցի մնացորդները և այնտեղ գտնված

---

2 Դրամները թվագրվում են XII դ. 70-ական թվականներից սկսած մինչև XIII դ. սկզբները (որոշումը՝ պատմ. գիտ. դոկտոր Ն. Մուշեղյանի)։

3 «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 2, էջ 266—267։

նյութերը պարզորոշ ցույց են տալիս, որ այդ անոթների արտադրությունը կենտրոնացված է եղել Դվինում և բավարարել է շուկայի պահանջները[4]։

XII—XIII դդ. խեցեղենն աչքի է ընկնում փորագիր զարդերով և գույների խճողվածությամբ, որը երբեմն հասցնում է պատկերի վերացարկման։ Դրանց վրա շատ են տարբեր տեսակի ցանցերը, շեղանկյունները, հաստ գոտիներով հյուսազարդերը, մեդալիոնները և այլն (աղ. II, 5—11)։ Զարդերին հատկանշական է շորս, վեց և ութ թերթանի վարդյակների սկզբունքը։ Միագույն շնարակով թասերին (փորագիր, թե անզարդ) բնորոշ է կանաչ գույնը, որի լայն տարածումը բացատրվում է տեխնոլոգիական պրոցեսների դյուրությամբ և հումքի առատությամբ՝ կապված պղնձի օքսիդների հետ։ Միագույն թասերի մեջ սահմանափակ է դեղին շնարակը, որը երբեմն օգտագործվում է կանաչի համադրությամբ։ Բազմագույն անոթների զարդարման հիմնական տարրերից է մուգ դարչնագույնը, որը շատ սակավ օգտագործված է նաև միագույն անոթների հարդարման ժամանակ։ Անոթների զարդարման գրեթե բոլոր ձևերը հանդիպում են պեղավայրից գտնված շնարակված խեցեղենի վրա։ Մենք դրան չենք անդրադառնում, քանի որ այն մանրամասն քննարկել է Բ. Առաքելյանը[5]։

Ընդհանրապես միջնադարյան զարդարվեստում և մասնավորապես խեցեղենի վրա նկատելի է հարդարման ձևերի քիչ թե շատ մնայունություն։ Նոր ձևերը հանդես են գալիս հնի հետ միասին, և հին ձևերը աստիճանաբար իրենց տեղը զիջում են նորին։ Այս դեպքում որոշակի շերտերում գտնված խեցեղենի թվագրության համար, որպես լրացուցիչ մեթոդ, կիրառվում է սովորական վիճակագրությունը։

XI և XII—XIII դդ. խեցեղեններն իրարից տարբերվում են անոթների ձևով և զարդով։ Առաջինում գերիշխում է անգոբած մակերեսի վրա, տարբեր գույնի ներկերով արված, հստակ պատկերներով ոչ փորագիր զարդը։ Թասերի հատակներն ավելի լայն են, իսկ պսակները՝ քիչ ներս ճկված։ Հարավային բուրգի հատվածից գտնված հասարակ, անշնարակ խեցեղենը վերստին հաստատում է ժամանակագրական այս պատկերը։ Հասարակ խեցեղենի ձևերը, շնարակածի համեմատությամբ, XI—XIII դդ. քիչ թե շատ մնայուն են։ Այդուհանդերձ, հարդարման մեջ նկատվում են որոշ մանրամասներ, որոնք բնորոշ են տվյալ ժամանակահատվածին։ Հայտնաբերված նյութերի մեջ ուշագրավ են սև, մրապատ կճուճները և կարասները։ Դրանք իրանի ստորին մասում քիչ երկարավուն են, ունեն նեղ հատակներ և լայն բերաններ։ Կճուճների այս ձևը չի հանդիպում ավելի վաղ նյութերում, որոնց բնորոշ են այլ համամասնություններ[6]։ Որոշակի ձևեր ունեն կանթերը, որոնց ստորին մասերում կան բլթակներ, իսկ վերին՝ պսակի հետ միացման տեղում, ներճկված են։ Կանթերի այս ձևը տարածված է Հայաստանի միջնադարյան հուշարձաններից (Գառնի, Արմավիր, Սպիտակ, Մարմաշեն, Անբերդ և այլն) գտնված

---

4 А. А. Калаптаряи, К вопросу о способах изготовления керамики в средневековой Армении («Археологические памятники феодальной Грузии», II, Тбилиси, 1974, с. 280—290).

5 Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. 1, Երևան, 1954։

6 Ա. Ա. Քալանթարյան, Դվին I, Կենտրոնական թաղամասի պեղումները 1964—1970 թթ., Երևան, 1976, էջ 52—64։

XI—XIII դդ. խեցեղենում։ Բոլորովին այլ են պսակները՝ կապված խփերի ձևերի հետ։ Սափորներն աչքի են ընկնում երկարավուն իրաններով և կանթերի միացման ձևերով։

Հասարակ խեցեղենի մեջ հետաքրքրական են երկու դրոշմազարդ սափորի բեկորները (աղ. I, 3, 4), որոնց դրոշմն արված է իրանի ամբողջ մակերեսով։ Այն պատկերում է բուսական գոտիների մեջ վերցված կենդանիների հետապնդման տեսարան։ Պատկերագրական առումով կենդանիների տեսարանը շատ մոտ է դրոշմազարդ կարասների վրա վերարտադրված գոտիների պատկերներին, տարբերությունը միայն այն է, որ վերջիններս արված են կլոր դրոշմների միջոցով։ Սափորների վերին զարդարուն մասերը պատրաստվել են կաղապարի մեջ և առանձին կպցվել իրանի ստորին մասին։ Դրոշմազարդ սափորների նմուշներ Դվինի և Հայաստանի միջնադարյան հուշարձաններում շատ քիչ են։ Նման հարդարանքով անոթների պատրաստումը, հավանաբար, հարազատ չի եղել հայ խեցեգործ վարպետներին։ Այդպիսի սափորներ մեծ քանակությամբ հայտնի են Իրանից և հատկապես Միջին Ասիայից։ Դվինում գտնվել են նաև անոթներ, որոնց խեցին իր որակով տարբերվում է տեղական արտադրանքից և, ըստ երևույթին, բերված է վերոհիշյալ շրջաններից։ Միջինասիական հուշարձաններում գտնվել են նման սափորների պատրաստման կաղապարներ[7]։ Ճնշման եղանակով կաղապարներում պատրաստված անոթները Հայաստանում երևան են եկել դեռևս IX դ.[8]։ Հետագայում այդ տեխնիկան կիրառվել է սնդկամանների և սափորների արտադրության մեջ։

Հարավային բուրգի պեղումների ժամանակ գտնված առարկաների մեջ ուշագրավ են երկաթե իրերը՝ հատկապես աշխատանքային գործիքները։ Իր տեսքով բավական հետաքրքիր է կարճ կոթառով, քիչ երկար շեղբով, ծայրը կոր հոտոցը (աղ. II, 4)։ Այդպիսի գործիքները հանդիպում են ազգագրական նյութերում և լայն տարածում են ունեցել որոշակի շրջաններում՝ կապված տարբեր աշխատանքների հետ[9]։ Գտնվել է նաև նույնանման մեկ ուրիշ հոտոց՝ քիչ ավելի լայն շեղբով։ Չնայած Դվինի կացարաններն անմիջապես կից են միջնաբերդի պարսպին, այնուամենայնիվ, խիստ քիչ են զենքերի գյուտերը։ Երկու տարվա աշխատանքների ընթացքում գտնվել է ընդամենը կլոր հատվածքով մեկ նետասլաք (աղ. II, 3), իսկ կանացի զարդարանքներ գրեթե չկան. գտնվել է միայն մի զույգ զանգակաձև պղնձե կախիկ։

Հարավային բուրգի շրջանում, վերին շերտը պեղելու ժամանակ, գտնվել է երեք փոքրիկ գերեզմանաքար, որոնցից մեկն ունի եռանկյունի հատվածք, իսկ մյուս երկուսը՝ ուղղանկյունաձև են։ Դրանցից մեկի ճակատային մասի փորվածքի մեջ կա հետևյալ արձանագրությունը. ԱՅՍ Է ՀԱՆԴ/ԻՍՏ ՔՈՅՐԿԱԴ/ՍՏԵՐ ԱԻԾ/ՈՎԻ ԵՎ ԱՄՈՒՍՆԻ ԱՌԻԻԾ/Ի ՅԻՇԵՑԷՔ Ի/ՔՍ ԱՂԱՉԵՄ։ Քարի եզրերը նույնպես արձանագրված են, սակայն դրանք վնասված են։ Հավանաբար, այդտեղ փորագրված է եղել արձանագրության թվականը։ Ելնելով

---

7 Г. А. Пугаченкова, Мастер-керамист Мухаммед-Али Инойятон из Мерва («Советская археология», 1958, № 2, с. 78—91).

8 Բ. Ն. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 229, Ա. Ա. Քալանթարյան, նշվ. աշխ., էջ 71, նկ. 25_1։

9 Վ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 100, տախտ. XLVIII։

տաճերի պալեոգրաֆիկ առանձնահատկություններից, արձանագրությունը կարելի է թվագրել XIII դ.։

Քաղաքի կենտրոնական թաղամասում աշխատանքները հիմնականում տարվեցին V դ. պալատի արևմտյան թևում։ Պալատի սյունազարդ դահլիճը կազմում է համալիրի կենտրոնական առանցքը և շրջապատված է սենյակներով։ 1978 թ. բացվեց սենյակներից մեկի պատի որմնախարիսխով հատվածը։ Ըստ երևույթին, այստեղ եղել է թաղակապ շինություն։ Եթե պալատի մյուս հատվածներում չի նկատվում հետագա օգտագործման հետք, ապա այս մասում IX դ. կատարվել են որոշ ձևափոխումներ։ Բացվել է IX դ. շինության քարե խարիսխներից մեկը։ 1979 թ. այս նույն հատվածում պեղվեց նկուղային մասը։ Շինության վերին մասերը խիստ ավերված են և դրանց մասին հստակ պատկերացում կազմել հնարավոր չէ։ Հատակի անմիջապես մակարդակից սկսվում են աստիճանները, որոնց հիմքերն ամրացված են կավով և երեսապատված թրծած աղյուսներով։ Նկուղը քառակուսի հատակագծով մի կառույց է և ունի մոտ 2,5 մ խորություն. հատակը տեղ-տեղ աղյուսներից է, իսկ պատերը՝ ամուր կավից։

Դվինի կենտրոնական թաղամասում շերտագրական պատկերն ուրվագծվում է բավական հստակ։ Եթե X—XIII դդ. շինությունները ոչնչացել են մասսայական թաղումների հետևանքով, ապա IX դ. վերին սահմանը որոշակիորեն թվագրվում է 893 թ. երկրաշարժի ժամանակ փուլ եկած պատերի մնացորդներով։ Այս հատվածից գտնվել են խեցեղեն, ապակի, ինչպես նաև՝ արաբական պղնձե դրամներ։ Անմիջապես այս շերտի տակ գտնվում են պալատի մնացորդները, որոնք թվագրվում են V—VI դդ.։ Ավերված պալատը VII դ. մնացել է շինարարական աղբի և տուֆի թափոնների մի հզոր շերտի տակ, որը հետագայում հարթեցվելով, վերածվել է կաթողիկե եկեղեցին շրջապատող հրապարակի։ Արաբական տիրապետության վերջին շրջանում (VIII դ. վերջ—IX դ. սկիզբ) այս հատվածը կառուցապատվել է, իսկ 893 թ. ամբողջովին ավերվել։

IX դ. ջնարակված խեցեղենը հայտնի է նախորդ տարիների պեղումներից[10]։ Դրանք հիմնականում քիչ ներս թեքված շրթերով և ցածր օղակաձև ոտքերով ոչ խորը թասեր են։ Թասերի այս տեսակը տարածված էր ոչ միայն Հայաստանում, այլև անդրկովկասյան, միջինասիական և մերձավորարևելյան հուշարձաններում։ Այս թասերն իրենց մանրամասներով խիստ տարբերվում են հետագա դարերի նմանօրինակ ձևերից։ Ջնարակման տեխնիկան նույնպես ունի իր որոշակի բնորոշ գծերը։ Զարդերը հիմնականում բուսական և երկրաչափական են, արված են դեղին, կանաչ և դարչնագույն երանգներով, զուսպ են ու հստակ։ Շատ են տարածված սլաքազարդը և գույների շախմատաձև դասավորությամբ ցանցերը։ Գույներից վառ դեղինի առավելությունն առանձնակի շքեղություն է հաղորդում անոթներին։ Իր շքեղությամբ աչքի է ընկնում փոքր կճուճը, որի մակերեսը պատված է դարչնագույն պտերով։

Հետաքրքրական են միագույն, կանաչ ջնարակով պատած, կրկնակի ծորակով, ձևավոր կանթերով կճուճները, որոնք մոտենում են սասանյան շրջանի միագույն, կանաչ ջնարակով անոթների ձևերին։ Անոթների նման հար-

10 Ա. Ա. Քալանթարյան, նշվ. աշխ., էջ 75—78։

դարումը բնորոշ է եղել Դվինի IX դ. խեցեգործությանը։ Այդպիսի անոթներ հայտնի են նաև նախորդ տարիների պեղումներից[11]։

Դվինի կենտրոնական թաղամասի հասարակ խեցեղենը ներկայանում է հորիզոնական ունկ ունեցող մի քանի փոքր կճուճներով, որոնք գտնվել են IX դ. հորից։ Առանձնապես հարուստ են նկուղից գտնված նյութերը (խեցեղեն, ապակի, մետաղ)։ Գեղարվեստական մեծ արժեք ունի շողյուն թասը (պահպանվել է կեսը), որը ներմուծված է Մերձավոր արևելքից։ Նրա պատրաստման հավանական կենտրոնը Սամառան է՝ խալիֆաթի մայրաքաղաքը IX դարում։ Թասի ներսում, մեդալիոնների մեջ, արու և էգ քարայծերի պատկերներ են։ Թասը դրսից և ներսից պատված է դարչնագույն կետերով և օվալներով։ Հատակին պահպանվել է արձանագրության մի հատված, որը, հավանաբար, թողել է պատրաստող վարպետը (նկ. 1)։ Պատահաբար գտնվել են նաև մ. թ. ա. VIII—VII դդ. թվագրվող, սև փայլեցրած խեցանոթների բեկորներ, որոնք ունեն կարմիր օխրայով արված փորագիր զարդեր։ Բեկորները վերին շերտի հետ խառնվել են վաղ միջնադարում և IX դ., երբ փորվել են շինությունների հիմքերը։ Վաղ խեցեղենի այս տեսակը հատուկ է միայն Դվինին։ Ըստ երևույթին, տեղի վարպետներն ունեցել են խեցեղենի հարդարման իրենց անհատական մոտեցումը և ստեղծել են յուրօրինակ ձևեր։ Այս առումով ուշագրավ է խուփի մի բեկոր, որի վրա որոշակիորեն պատկերված է ձուկ։

Կենտրոնական թաղամասում պեղումներ են կատարվել մի շարք հատվածներում՝ բազիլիկ և կաթողիկե եկեղեցու միջև ընկած տարածքում, կաթողիկեից հարավ-արևելք և նրա մուտքի շրջակայքում։

Եկեղեցու շրջակայքի պեղումների շնորհիվ բնակավայրի հելլենիստական շրջանի շերտերի և մշակույթի հետաքրքիր պատկեր է բացվել։ Հելլենիստական շերտն այս հատվածում որոշակիորեն ուրվագծվում է և գտնվում է երկու լավ թվագրվող հորիզոնների միջև։ Նրա վերին սահմանը կաթողիկեի կառուցման ժամանակ սպիտակ ավազաքարի տաշվածքից առաջացած շերտն է, որը հորիզոնական գծով դիտվում է եկեղեցու շրջակայքում (ստորին սահմանը մ. թ. ա. VIII—VII դդ. շինությունների հիմնապատերն են)։ Այս շերտից, որի խորությունը տեղ-տեղ հասնում է 0,5—0,7 մ-ի, դուրս է նկել բացարձակապես մ. թ. ա. II—մ. թ. I դդ., խեցեղեն՝ կարմիր փայլեցրած և գունազարդ թասերի, տափաշշերի, փիալաների, այլ անոթների բեկորներ, հելլենիստական շրջանին բնորոշ հասարակ խեցեղենի մնացորդներ և այլն։ Այս նույն շերտում բացվել են խեցեղենով կարասային 3 թաղում (աղ. 1, 5, 6)։ Ցավոք, պեղավայրում շինությունների մնացորդներ չեն նկատվել, սակայն նույն հատվածի վերին շերտերում բացված պատերի մեջ առկա ճարտարապետական մանրամասները (խարիսխ) վկայում են դրանց գոյության փաստը։

Հելլենիստական շրջանում Դվինի կենտրոնական թաղամասը եղել է նաև դամբարանադաշտ, որտեղ մինչ այժմ բացվել են միայն կարասային թաղումներ։ Բնակավայրում թաղումներ կատարելը, հավանաբար, կապված է եղել թաղման ծիսակատարությունների հետ, մի երևույթ, որը նկատելի է

11 Նույն տեղում, էջ 78—79։

նաև Արտաշատում, ինչպես նաև՝ վերջին տարիներս Ախուրյանի ջրամբարի տարածքում բացված Շիրակավան բնակավայրում։

Անմիջապես անտիկ շերտի վրա հայտնաբերվել են սպիտակ, ճեղքված ավազաքարով կառուցված վաղ միջնադարյան պատերի մնացորդներ, ուղղահայաց կանգնեցրած V—VI դդ. եղևնաձև զարդերով կարասներ և կղմինդրների բեկորներ։ Բացվել է ջրատար երկու շարք խողովակների մի հատված, որը,



Նկ. 1. Դվինից հայտնաբերված շողյուն թաս։

հավանաբար, անց է կացվել VII դ. սկզբներին։ Այս նյութերը ենթադրել են տալիս, որ կաթողիկեի հարավային մասում եղել է ինչ-որ շինություն։ Բազիլիկ եկեղեցու մոտ կան IX դ. հորեր, որոնցից դուրս են գալիս ապակե անոթների և հասարակ խեցեղենի բեկորներ։ Կաթողիկեին անմիջապես կից բացվել են միջնադարյան գերեզմաններ, որոնք պատրաստված են 893 թ.

երկրաշարժի ժամանակ փուլ եկած եկեղեցու սրբատաշ քարերից։ Այստեղ թաղված են եղել հոգևորականներ, քանի որ լավ պահպանված կմախքի վրա կային սև քղամիդի մնացորդներ։

Դվինն այն հուշարձաններից է, որի նյութերով կարելի է որոշակի եզրահանգումներ անել միջնադարյան արհեստների տարբեր բնագավառների վերաբերյալ։ Այդ տեսակետից ուշագրավ է կենտրոնական թաղամասի մուտքի մոտ բացված վառարանը։ Վերջինս փորված է թաղամասի պարսպապատի մեջ, անմիջապես ջրային խրամատի եզրին։ Վառարանից պահպանվել են նրա ստորին մասը՝ 0,8 մ բարձրությամբ և օդամուղ առվակը՝ 3 մ երկարությամբ։ Ձվաձև վառարանի հատակը շարված է հրակայուն, թրծված աղյուսով, իսկ պատերը՝ կավածեփ են։ Վառարանում կար հանգած կրի զանգված, որը վկայում է դրա օգտագործման մասին։ Վառարանի ընդհանուր տեսքը վերականգնել դժվար է, քանի որ պահպանված մասերն այդ հնարավորությունը չեն ընձեռում։ Հատակի մասում կա օդի հոսանքի տարածման համար փորված երկու ուղի։ Նրա միջից գտնված ջնարակած խեցեղենի բեկորների ձևերից ելնելով, վառարանը թվագրվում է IX—X դդ.։ Հավանաբար, այն կառուցվել է 893 թ. երկրաշարժից անմիջապես հետո, երբ ավերված քաղաքի վերականգնման համար առաջացել է կրի մեծ պահանջ։

Դվինի արշավախումբը, 1978—1979 թթ. ձեռք է բերել նաև գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ գտնված նյութեր։ Դրանց մեջ մեծ թիվ են կազմում արաբական, բյուզանդական, սելջուկյան, վրացական արծաթե և պղնձե դրամները։ Դվինում առաջին անգամ հանդիպում է Շեդդադյան ամիրա ալ-Ջալիլ Շավուր Իբն ալ-Ֆալդի XI դ. արծաթե դրամը, որը «...նոր տվյալ է Շեդդադյանների մասին և առնչվում է Հայաստանի և Աղվանքի քաղաքական պատմության հետ»[12]։ Հազվագյուտ է Օրդուքյան էմիրությունում հատված պղնձե դրամների առկայությունը։ Վերջիններես շատ սակավ հանդիպել են նաև Դվինի նախորդ պեղումների ժամանակ։ Դրամների գյուտերը խոսում են քաղաքի ներքին և արտաքին առևտրական լայն հարաբերությունների մասին։

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ձեռք բերված սասանյան երեք կնիքները, որոնք պատրաստված են քարից, կիսագնդաձև են և ունեն թելով կապելու համար արված լայն անցքեր։ Դրանցից մեկի վրա պատկերված է վազող եղջերու, որի վրա նստած է թևատարած արծիվ (նկ. 2 $_4$)։ Այս պատկերը լայն տարածում ունի սասանյան գլիպտիկայում և բազմիցս հանդիպում է տարբեր ժողովածուներում[13]։ Մյուս՝ եզրերը ժապավենազարդով կնիքի վրա, փորագրված է եղջերուի գլուխ (նկ. 2 $_3$)։ Երրորդ կնիքի վրա պատկերված է նշան (սիմվոլ), որը նույնպես լայն տարածում ուներ սասանյան գլիպտիկայում (նկ. 2 $_2$), դրամների վրա, քանդակագործության մեջ[14] և այլն։ Կնիքն աջ մասում ունի արձանագրություն՝ I's[ty] «ար-

---

12 Ա. Մուշեղյան, Նորահայտ դրամներ Դվինից («1977—1978 թթ. հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ», Երևան, 1979, էջ 28)։

13 R. Göbl, Der Sasanidische Siegelkanon, Braunschweig, 1973, Taf. 29.

14 А. Я. Борисов, В. Г. Луконин, Сасанидские геммы, Л., 1963, с. 39—41.

դարություն»[15]։ Նշանի վերին մահիկի մեջ կա մի փոքրիկ խաչ։ Սա շատ հետաքրքիր երևույթ է և ցույց է տալիս, որ կնիքը ստեղծվել է զրադաշտական միջավայրում և պատկանել է ոչ քրիստոնյայի։ Հետագայում այն անցնելով քրիստոնյայի ձեռք, վրան լրացուցիչ փորագրվել է խաչի նշան, և ոչնչացվել է կնիքի զրադաշտական բովանդակությունը[16]։ Սասանյան այս կնիքներն անձնական են և թվագրվում են V—VI դդ.։

Նկ. 2. Դվինից հայտնաբերված կնիքներ։

XI—XIII դդ. շատ հետաքրքիր քարե կնիք է պատահաբար գտնվել քաղաքի տարածքից։ Կնիքը երկկողմանի է, չորս կողմից ճոխ զարդերով, վերին և ստորին մասերում փորագրված է արաբատառ արձանագրություն։ Փոքր կողմում գրված է՝ «Ալլահը ինձ բավական է (որպես հովանավոր)», ներքևի՝ մեծ կողմում «Մեր սխալների պատճառով նրան ենք ապավինում»։ Արձանագրության ընթերցումը նախնական է և հետագա ճշգրտման կարիք ունի[17] (նկ. 2 1)։

Պատահական գտնված իրերի մեջ բացառիկ արժեք ունի բրոնզե թասը, որը մասնագիտական գրականության մեջ հայտնի է իբրև խնկաման։ Թասն ունեցել է երեք փղակերպ ոտք (պահպանվել է մեկը)։ Ներսն ու փռված պսակը ճոխ հարդարված են և կրում են արձանագրությունների կրկնվող հատվածներ։ Դրսից շուրջանակն ունի արաբատառ արձանագրություն (նկ. 3)։ Նման խնկամանները լայն տարածում են ունեցել Մերձավոր արևելքում

15 Արձանագրությունն ընթերցել է պատմական գիտությունների դոկտոր Վ. Լուկոնինը։

16 А. Я. Борисов, Эпиграфические заметки, III. Об одной группе сасанидских резных камней («Труды отдела Востока Эрмитажа», т. I, Л., 1939, с. 235).

17 Արձանագրությունն ընթերցել է պատմական գիտությունների դոկտոր Հ. Փափազյանը։

և Միջին Ասիայում։ Թասի նախնական քննությունը ենթադրել է տալիս, որ այն կարող է պատրաստված լինել տեղում, XI—XII դդ.։

Այսպիսով, 1978—1979 թթ. պեղումների ժամանակ Դվինից հայտնաբերված ճարտարապետական նոր հուշարձանները և բազմաթիվ նյութերը



Նկ. 3. Բրոնզե թաս։

լրացնում են նախորդ տարիներին առաջադրված հարցերը և նոր շունչ են հաղորդում հուշարձանին։

РАСКОПКИ ДВИНА В 1978—1979 гг.

АРАМ КАЛАНТАРЯН

Резюме

Раскопки велись в трех участках города—на западном склоне цитадели, где был выявлен торгово-ремесленный квартал (XII—XIII вв.), у южной большой башни крепостной стены, где раскопано монументальное сооружение (X—XII вв.), и в центральном квартале города, в западном крыле дворца V в. Материалы ремесленного производства (керамика, стекло, металл) представлены лучшими образцами. Весьма интересны случайные находки (сасанидские геммы, бронзовая курильница и т. д.).